

**Չարց** Ի՞նչ է հեռուստահեռարձակումը և ռադիոհեռարձակումը:

**Պատասխան** Հեռուստառադիոհեռարձակումը էլեկտրամագնիսական ալիքների միջոցով պատկերների և (կամ) հնչյունների կամ դրանց պայմանանշանների այնպիսի տարածումն է հաղորդագծով (ներառյալ՝ կաբելային (լարային) կապով) կամ առանց հաղորդագծի (ներառյալ՝ ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ արբանյակային կապով եթեր հեռարձակումը), որ այդ պատկերները կամ հնչյուններն ընկալելի լինեն հասարակությանը: Հեռարձակում է համարվում նաև կողավորված ազդանշանների տարածումը, եթե դրանց ապակողավորման միջոցները հեռուստառադիոլսարանին տրամադրել է հեռարձակող կազմակերպությունը, կամ տրամադրվել է նրա համաձայնությամբ: